

Կղեալ վեց ճէմաէթքս, քՏնյքս, իշխանքս, եւ բոլոր էսնաֆից ծերունիքս եւ խօսացտեարքս, ի նախկին օրէ ի Պտլիքուրի կոչեցմանն Տնրկաց Տօր մերոյ Տն Գրիգորի խոհեմագոյն վրդպտին, մինչեւ ի գալ հասանիլ ի յօր պայմանագրիս, ամենքեանքս խօշնիթ եմք, եւ հաճելք եւ հւնելք իւրն, եւ իւրոյ կռւիքունն, եւ մեք վերստին յայսմ հետէ հաճիմք եւ հւնիմք, եւ մեզ գլուխ եւ Պտլիք կամիմք, յիմ կղմնէ խօշնիթ եմք, եւ ով ոք որ թէ յնչ եւ թէ յետոյ ինքեան Պտլիքին մերոյ ներհակուի անէ, եւ ընդդէմ շարժի եւ քէտէր տալոյ սէվտայի լինի, այնպիսի անձն թէ կարգաւոր իցէ, եւ թէ աշխարհական մեզ ամենեցունցս թշնամի է, եւ Տնրկաց վնասիչ, վասն որոյ մեք ամենքեանքս այնպիսի չարագլուխ եւ նիզամի իխտիլալ տուող անձին վրէժխնդիր եմք, եւ զպառլ չեմք աներ, եւ անվ եթէ հարկ լինի յԱլքունիսն եւ միաբանուր իմաց կու տամք. եւ այնպիսի չարեացն արդար հատուցմամբ զպատիժ տալ կու տամք, մեր Պտլիքին բարեկամին բարեկամք եմք, եւ թշնամոյն վրէժխնդիր՝ գլխով չափ. նորա համար՝ ահաւասիկ զայս պայմանագիրս ամենեցունցս հւնուր, եւ միաբան յօժարուր ի մէջ սիւնհոդոսի Պատրիարքին եկեղեցւոյն գրեցաք՝ կնքեցաք վեց ճէմաէթքս, որ եւ եղնցի հաստատ եւ հաւաստի առաջի Այ, եւ իմ մարդկանց: Գրեցաւ եւ կնքեցաւ պայմանագիրս ի թուին ռմիս, եւ փետրվարի Իբ, ի յօրն չորեքշաբթի: